

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐ. ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԱՐԴԵՇԻՐ ԶՈՒՑԱՂԱՐԻ**

**Ավրոմանի բարբառը**

Ժ.02.06 – «ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ (իրանագիտություն)»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՍԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2012**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

**Գիտական ղեկավար**՝ քանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական**

**ընդդիմախոսներ**՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Մ. Լ. Խաչիկյան

քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Լ.Վ.Ղազարյան

**Առաջատար**

**կազմակերպություն**՝ Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական  
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. ապրիլի 16-ին՝ ժամը 14:00 ՀՀ  
ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 019  
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր  
Լուսավորչի փ. 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի  
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է մարտի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,  
քանասիրական գիտությունների թեկնածու՝

Ն. Ս. Սիմոնյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **Ատենախոսության թեմայի արդիականությունը:**

Ավրոմանի բարբառի գրառման և ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա նյութը բացառիկ կարևորություն է ներկայացնում իրանական բարբառային զանգվածի վերաբերյալ ուսումնասիրություններն ամբողջացնելու, այդ զանգվածի պատմական զարգացման ու բարբառային գիտական դասակարգման լիարժեք պատկերն ունենալու տեսանկյուններից: Սրանով է բացատրվում այս **ատենախոսության թեմայի արդիականությունը**. ավրոմանիի, որպես իրանական բարբառային զանգվածի առանձին անդամի, համաժամանակյա և մասամբ տարածամանակյա ուսումնասիրությունը:

Դեռևս 20-րդ դարի սկզբին երեք եվրոպացի գիտնական ուսումնասիրել են ավրոմանին (հավրամանին): Առաջինն իր գրառումները հրատարակել է ֆրանսիացի իրանագետ Ժակ դե Մորգանը 1904թ.: Մորգանից հետո այս թեմային անդրադարձել են Ա. Մ. Բենեդիկտսենը և Օսկար Մաննը, որոնք իրենց լեզվաբանական գրառումների մեծ մասը նախապես կատարել էին Սանանդաջում (Սինա): 1921թ. Ա. Քրիստենսենը հրատարակել է ավրոմանիի քերականական ակնարկը: Այս աշխատանքի մեծ մասը հիմնված է Բենեդիկտսենի տեքստերի վրա, որոնք վերջինս հավաքագրել էր 1901թ. Իրանական Քուրդիստան (Սեննա և Փավայի հարակից շրջանները) այցի ժամանակ: Ավելի ուշ, Ա. Քրիստենսենը Բենեդիկտսենի հավաքածուից հրատարակում է նոր տեքստեր: Այնուամենայնիվ, ավրոմանիին նվիրված աշխատանքները խիստ սակավաթիվ են, որոնցում, բնականաբար, հաշվի չեն առնված արդի լեզվաբանության նորագույն ձեռքբերումներն ու մեթոդաբանությունը: Բացի այս, մինչև օրս չի ներկայացվել հենց ավրոմանիի հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկություններն արտացոլող որևէ լրակատար հետազոտություն:

Գուրանի լեզվի ավրոմանի կամ հավրամի բարբառը համարվում է բոլոր գուրան-բարանդի ցեղերի սակրալ լեզուն, և առհասարակ, սա իրենից ենթադրում է հաղորդակցության վերբարբառային լեզու:

Ավրոմանի բարբառի գրանցումը և հետազոտումը արդիական է թե՛ իրանական լեզվաբանության և թե՛, մասնավորապես, գուրանիի ու քրդերենի բարբառների պատմահամեմատական քննության առումով:

### **Ատենախոսության հետազոտության օբյեկտը:**

Աշխատանքի հետազոտության օբյեկտը Իրանի Քերմանշահ նահանգի Փավա շահրեստանում խոսվող ավրոմանի բարբառն է, դրա

քննությունը համաժամանակյա ու պատմահամեմատական տեսանկյուններից: Ընդ որում, լեզվաբանական միջոցների կիրառմամբ նպատակ է դրվել որոշարկելու այս բարբառի տեղը իրանական լեզուների ու բարբառների համակարգում:

Իրանագիտության ոլորտում գուրանին, այդ թվում նաև ավրոմանին, քննարկվում էին քրդական բարբառների համատեքստում, ինչը չդիմանալով գիտական լուրջ փաստարկմանը, հերքվեց և մերժվեց: Հետազոտությունն **առարկայացած է** կոնկրետ Փավայում խոսվող ավրոմանի բարբառի ուսումնասիրությանն ու քրդական բարբառներից առանձին այն դիտարկելուն:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:**

Սույն ատենախոսության **նպատակն** է դաշտային նյութերի հիման վրա իրականացնել ավրոմանիի համաժամանակյա և, մասամբ, տարաժամանակյա քննություն: Ընդ որում, լեզվաբանական միջոցների կիրառմամբ նպատակ է դրվել որոշարկելու այս բարբառի տեղը իրանական լեզուների ու բարբառների համակարգում: Այս նպատակն իրագործելու համար փորձել ենք լուծել հետևյալ առաջադիր խնդիրները.

- 1)գրանցել ու ներկայացնել ողջ բարբառային նյութը:
- 2)առկա լեզվանյութը ենթարկել հնչյունաբանական ու քերականական համաժամանակյա և տարաժամանակյա վերլուծության:
- 3)դիտարկել ավրոմանին հարևան լեզուների ու բարբառների հետ համեմատական համատեքստում:
- 4)իրականացնել ավրոմանիի ու հարակից բարբառների ու լեզուների և պարսկերենի հնչյունական ու քերականական համակարգերի համեմատական քննություն:
- 5)վեր հանել բնիկ բառապաշարային ու քերականական ձևերը:
- 6)ներկայացնել ավրոմանիի հիմնական բառացուցակն ու տեքստային նմուշները:

**Հետազոտության գիտական նորույթը:**

Հետազոտության **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ ամբողջությամբ հավաքագրվել ու ներկայացվել է իրանական բարբառագիտությանը մասամբ ծանոթ ավրոմանիի լեզվական նյութը, փորձ է կատարվել համաժամանակյա քննության ենթարկել բարբառի քերականական համակարգը, իսկ հնչյունաբանությունը ենթարկվել է պատմահամեմատական ուսումնասիրության, ինչն օգնել է որոշարկելու իրանական լեզուների համակարգում այս բարբառի զբաղեցրած տեղը:

Աշխատանքի մեջ պարսկերենի հնչյունական համակարգը դիտարկվել է ավրոմանիի հետ համեմատական համաժամանակյա քննության

համատեքստում և ստուգաբանական քննության են ենթարկվել բազմաթիվ բնիկ բառամիավորներ, տրվել են դրանց գուգաբանությունները քրդական բարբառներում:

Առաջին անգամ ներկայացվել է բարբառի հիմնական բառապաշարի համեմատաբար ամբողջական ցանկը:

**Աշխատանքի կիրառական նշանակությունը (գործնական ու տեսական արժեքը):**

Աշխատանքի **տեսական նշանակությունը** որոշվում է ներկայացված տեսությունների ու տեղեկությունների վերլուծական շարադրմամբ, ինչպես նաև լեզվանյութի ուսումնասիրության մեթոդների կիրառման արդյունավետությամբ:

Աշխատանքի արդյունքները **գործնական** արժեք կարող են ներկայացնել իրանական բարբառագիտության շրջանակներում ավրոմանիի ու իրանական մյուս խոսվածքների ու բարբառների հարաբերակցության պարզաբանման համար, կարող են ծառայել իրանական բարբառագիտություն ուսումնասիրողների համար որպես դասընթացի բաղադրիչ, հայոց լեզվի պատմական զարգացման խնդիրները ուսումնասիրողների համար իբրև համեմատական օժանդակ նյութ:

**Հետազոտության մեթոդները:**

Ատենախոսությունը շարադրված է հետևյալ **մեթոդների** կիրարկմամբ. նկարագրական մեթոդի միջոցով լեզվանյութի ներկայացում, պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ լեզվանյութի քննություն պատմական զարգացման համատեքստում: Աշխատանքում կիրառվել են լեզվական նյութի քննության համաժամանակյա ու տարաժամանակյա եղանակները: Նշված մեթոդների գուգահեռ կիրառումը կամ համադրումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ատենախոսությունը նպատակ է հետապնդում ավրոմանիին դիտարկել թե՛ համաժամանակյա, թե՛ տարաժամանակյա լեզվաբանական վերլուծության տեսանկյունից, ինչպես նաև բացահայտել ավրոմանիի և ցեղակից լեզուների ու բարբառների հետ վերջինիս ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները:

**Ատենախոսության փորձաքննությունը:**

Աշխատանքի մի շարք խնդիրներ ու դրույթներ ուսումնասիրվել ու լուսաբանվել են հանրապետական գիտական «Orentalia» ժողովածուի և «Իրան–նամե» հանդեսի էջերում հեղինակի լույս ընծայած հոդվածներում:

Աշխատանքը քննարկել ու պաշտպանության են երաշխավորել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը:

**Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:**

Ատենախոսության հիմնական մասը կազմված է ներածությունից, թվագրված ենթաբաժիններից կազմված երկու գլուխներից, եզրակացությունից, համառոտագրությունների ցուցակից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությանը կից ներկայացված է հավելված, որն ընդգրկում է ավրոմանի-հայերեն բառացուցակ:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**ՆՏՐԱՍՈՒԹՅՈՒՆ**-ը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 0.1 *Ընդհանուր նկատողություններ*, 0.2 *Գուրանական ավրոմանի ցեղը և նրա բարբառը*, 0.3 *Ավրոմանիի ուսումնասիրության պատմությունը*, 0.4 *Ավրոմանիով ստեղծված գրականությունը*:

Ընդհանուր նկատողություններ ենթաբաժնում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտը, նշվում քննարկման ենթակա հարցերի շրջանակը:

Երկրորդ ենթաբաժնում մանրամասն ներկայացվում են գուրաններն ու դրանց մեջ մտնող ավրոմաններն ու ավրոմանի բարբառը: Ինչպես հայտնի է, գուրանին պատկանում է իրանական լեզվախմբի հյուսիս արևմտյան ճյուղի կասպյան խմբին: Գուրանական բարբառներով խոսող բնակչության ընդհանուր թիվը մոտավորապես մեկ միլիոն է: Գուրանները բաժանվում են չորս խմբի՝ գուրանների ցեղային միավորումը, հավրամանների (ավրոմանների) մեծ ցեղը, բաջալանի ցեղախումբը, քանդուլացիները, որոնցից ավրոմանների լեզուն դասվում է առավել հնավանդ ու լավ պահպանված լեզուների շարքը:

Ավրոմանիի տարածման հիմնական հատվածը համարվում է Ավրոման-ի-լահունը, որը տեղակայված է Քերմանշահ նահանգում, և բաժանվում է երկու մասի՝ հյուսիսային՝ Նավսուդա կենտրոնով ու հարավային՝ Փավա կենտրոնով:

Փավան, որտեղ հավաքագրվել է սույն ատենախոսության նյութը, գտնվում է Քերմանշահ նահանգից 160 կմ հյուսիս-արևմուտք: Այն հյուսիսում և հյուսիս-արևելքում սահմանակից է Քուրդիստան նահանգին, հարավում և հարավ-արևմուտքում՝ Ջավանուդ շահրեսթանին, արևելքում և հյուսիս-արևմտյան մի փոքր հատվածում՝ Իրաքին:

Ընդհանրապես, Ավրոման-ի-լահունն ունի է 22 գյուղ, որոնք են՝ Հանի Գարմելան, որն ունի 124 ընտանիք և 438 բնակիչ, Դեզավարը՝ 51 ընտանիք և 158 բնակիչ, Նարվին՝ 122 ընտանիք և 543 բնակիչ, Շերքանը՝

111 ընտանիք և 486 բնակիչ, Թեշարը՝ 81 ընտանիք և 318 բնակիչ, Վեզլին՝ 36 ընտանիք և 146 բնակիչ, Նիսանան՝ 51 ընտանիք և 230 բնակիչ, Հիրվին՝ 33 ընտանիք և 133 բնակիչ, Հաջիջը՝ 161 ընտանիք և 750 բնակիչ, Դարյանը՝ 239 ընտանիք և 1038 բնակիչ, Վարա՛ն՝ 9 ընտանիք և 412 բնակիչ, Նաջարը՝ 66 ընտանիք և 322 բնակիչ, Քոմեդարան՝ 26 ընտանիք և 105 բնակիչ, Դեշան՝ 370 ընտանիք և 1670 բնակիչ, Գալալը՝ 160 ընտանիք և 772 բնակիչ, Խանադահը՝ 359 ընտանիք և 1571 բնակիչ, Դարմուրը՝ 6 ընտանիք և 25 բնակիչ, ինչպես նաև անբնակ հետևյալ գյուղերը՝ Քամինան, Բիդրվասը, Շուշմի՛ օյան, Սոֆլան, Շիխանը:

Հարկ է նշել, որ Հավրոմանի տարածքի բնակչության 90% մուսուլման է՝ սունիական շաֆիական ուղղության հետևորդ, իսկ մնացյալները՝ դավանում են ահլ-ե-հակդի ուսմունքը:

Ներածության երրորդ ենթաբաժինը նվիրված է ավրոմանիի ուսումնասիրության պատմությանը, որը սկզբնավորվում է 20-րդ դարի սկզբին: Երեք հայտնի եվրոպացի գիտնական եղել են ավրոմանիի ուսումնասիրության առաջնեկները՝ ֆրանսիացի իրանագետ Ժակ դե Մորգանը 1904թ., Ա. Մ. Բենեդիկտսենը և Օսկար Մաննը, որոնք իրենց լեզվաբանական գրառումների մեծ մասը նախապես կատարել էին Սանանդաջում (Սինա): Ավրոմանիի ուսումնասիրման պատմության մեջ հաջորդ, կարևոր քայլը եղել է Դ. Մակքենզիի աշխատությունը, որն իր մեջ ներառում է քերականական ակնարկ, տեքստեր, մեկնություններ: Մենագրության նախաբանից պարզվում է, որ Մակքենզին տեքստերն արձանագրել է 1957թ. Լոնդոնում՝ մի երիտասարդ ավրոմանցու շուրթերից:

Հետագայում ռուս արևելագետներից ավրոմանիով զբաղվել է Ջ.Ա. Յուսուպովան, ով, իհարկե, այն համարում է քրդական բարբառ և նրա ուսումնասիրությունը պետք է դիտարկել քննադատական լույսի ներքո: Իսկ հայ արևելագիտության մեջ, ընդհանրապես, գուրանական ցեղերի մասին կարևոր հետազոտություններ է կատարել Գ. Ասատրյանը:

Ներածության վերջին ենթաբաժնում փորձ է կատարվել ներկայացնել ավրոմանիով ստեղծված կրոնական և աշխարհիկ գրականության մասին ոչ ամբողջական տեղեկություններ՝ ելնելով հետազոտության նպատակներից ու շրջանակներից:

### **ԳԼՈՒԽ I: ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Այս գլուխը բաղկացած է վեց ենթագլխից: Ներկայացվում ավրոմանիի հնչյունական համակարգը համաժամանակյա կտրվածքով, համեմատական քննության են ենթարկվել ավրոմանիի ու պարսկերենի հնչյունական համակարգերը, իսկ բաղաձայնները դիտարկվել են պատմական զարգացման տեսանկյունից:

Չեռք բերած նյութը թույլ է տալիս ավրոմանիում դիտարկել 9 ձայնավոր և 28 բաղաձայն հնչյուն, 6 երկհնչյուն, ինչպես նաև երեք հնչատարբերակ (**ճ, ղ, ձ**)։

Ավրոմանիի ձայնավորներն են՝ **á, a, ò, o, u, ẽ, e, i, ə**։

Ավրոմանիի բաղաձայններն են՝ **b, p, m, w, v, f, d, t, z, s, ʒ, r, ř, n, l, l, j, ʒ, ʃ, y, g, k, q, ɣ, x, ʻ, h, h**։

Ավրոմանիի երկհնչյուններն են՝ **aw, áw, ay, áy, iw, ew**։

Ըստ արտասանման դիրքի՝ *d* բաղաձայնն ունի հնչույթաբանական տարբերություններ։ *d*-ն բառավերջում կոկորդային արտաբերում ունի՝ որպես միջանկյալ հնչյուն *d* և *v*-ի միջև, օր.՝ ավր. ẽđ «նա (արական սեռ)», իսկ բառակցքում և բառամիջում՝ արտասանվում է պարսկերեն *d* հնչյունի նման (օր.՝ ավր. dáđ «հիշ, հշոց, աղաղակ»։ ավր. awrday «բերել, տեղ հասցնել, հաղորդել, հայտնել»)։ *r* բաղաձայնն արտաբերման երկու եղանակ ունի՝ պարզ և թրթռացող։ Առաջինն արտահայտվում է *r* նշանով, օր.՝ ավր. «tóryay», ավր. «perda», երկրորդը՝ *ř* -ով, օր.՝ ավր. ʒeř «կնճիռ, խորշոմ; փտած, նեխած»։ Բառակցքում *r*-ն մշտապես թրթռացող է, ուստի դրա վրա միշտ դրվում է «~» նշանը (օր.՝ ավր. řárá «հերթով»)։ *l* բաղաձայնն ավրոմանիում երկու կերպ է արտաբերվում, առաջին՝ ինչպես *l* հնչյունը պարսկերենում, օր.՝ ավր. dəl «սիրտ» բառում, երկրորդ *l*-ն՝ ինչպես արաբերենում, օր.՝ ավր. aħa «աստված» բառում։

Ավրոմանիում *n*-ն ատամնային ռնգային հնչյուն լինելուց զատ նաև *ŋ* ետնալեզվային հնչատարբերակի արտահայտիչն է, օր.՝ ավր. šena «մեղմ քամի»։ ավր. šenji «ուտելի բուսատեսակ»։ Իսկ եթե *n* բաղաձայնը նախորդում է *g(k)* հնչյունին, ապա արտաբերվում է որպես՝ ավր. dan «աղմուկ», «ձայն», հմմտ.՝ պրսկ. bāng։

Իրանական հյուսիսարևմտյան բարբառների համակարգում ավրոմանիի տեղն առավել որոշակիորեն ցույց տալու համար ավրոմանիի բաղաձայնները քննության են ենթարկվել պատմական զարգացման տեսանկյունից։

Ձայնավորները մեծ մասամբ ենթարկվում են այն հիմնական օրինաչափություններին, որոնք հատուկ են գրեթե ողջ արևմտաիրանական բարբառային զանգվածին։

Ստորև բերվող աղյուսակի միջոցով ներեկայացվում են հին իրանական-ավրոմանի հնչյունական զարգացումներն ու համապատասխանությունները։

Հին	Ավրոմանի		
	բառակցք	բառամեջ	բառավերջ
*p	p-	-w-	-p
*b	b-	-v-	-b
*f	*fr- > r-	-v-	-f
*t	t-	*-t > -h- / ʒ (միջանկյալ)	*-t > -ð- > -t



		-d-/-δ- (մնցումով)	
*d	d-	*-d- > -y-/օ	-d
*θ	h-, t-, s-	*-θ- > -h-/օ	
*-θr-		*-θr- (> *-hr-) > -r-, *-θr- (> *-hr-) > -y-	
*k	k-	-h- (եղբ *k ունի ածանցային նշանակություն)	
*g	g-; j-; w-/օ-	*-zg- < -žg-	
*γ		*-γn- > -γ-	
*x	x-; h-; *xw- (*hw) > w-	*-xm- > -m-; *-xt- > -t-; *-xš- > -š-; *-xšn- < -žn-	
*č	č-	-č-/-j-; -ž-	-č
*j	ž-	-ž-	-ž
*s (< հնդեվր.* k, *s)	s-	*-sp- < -šp-; *-sr- < -sr-; *-st- < -s-	-s
*š	š-	-h-/-y-/օ; -ž-; *-šk-> -šk-; *-št-> -št-	-š
*z	z-	-z-	-z
*y	j-, y-	-y-	-y
*h	h-/w-		
*w	w-; *dw- > b-		
*m	m-	-m-, *-xm/*-šm- > -m-	-m
*n	n-	-n-	-n
*r	r-	-r-; *-ry- > -r- *-rn- > -ř- (-rr-); *-rz-, -rd- < -l-	*-rz > -rz

**Աղյուսակ 1. Հին իրանական-ավրոմանի հնչյունական զարգացումներն ու համապատասխանությունները.**

Ինչպես տեսնում ենք, ավրոմանիի բաղաձայնական համակարգը պատմական զարգացման առումով ցույց է տալիս հյուսիսարևմտյան իրանական լեզուներին ու բարբառներին հատուկ առնաձևահատկություններ: Այս բարբառը քրդերենի բարբառների հետ համեմատական համատեքստում կարելի է բնորոշել առավել անաղարտ

ու զերծ հարավարևմտյան կամ պարսկական բարբառների բնորոշ հատկություններից:

**ԳԼՈՒԽ II. ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ավրոմանիում գոյականը տարբերակում է թվի, սեռի, որոշյալ և անորոշ առման, ուղիղ և թեք հոլովի քերականական կարգերը:

**Գոյականի թիվը.** գոյականին հատուկ է եզակի և հոգնակի թվի քերակարգը: Ավրոմանիում հոգնակի թիվը կազմվում է **ե** ցուցիչի հավելումով:

**Գոյականի սեռը.** ավրոմանիի կարևորագույն առանձնահատկություններից է սեռի քերականական կարգը: Գոյականը տարբերակում է արական և իգական սեռ: Ավրոմանիիում իգական սեռին պատկանող գոյականները հիմնականում ավարտվում են **a** ձայնավոր հնչյունով: **Որոշյալ առումն** ավրոմանիում դրսևորվում է և՛ հատուկ ցուցիչով, և՛ առանց ցուցիչի: Որոշյալ առման ցուցիչները հետևյալն են. իգական սեռ՝ **-ka, -kē**, արական սեռ՝ **-aka: Սնորոշ առումը** նույնպես ունի ցուցիչներ և արտահայտվում է հետևյալ կերպ՝

**Իգական սեռի** բաղաձայնով ավարտվող գոյականները ստանում են անորոշ առման **-ay** կամ **-ēwa** ցուցիչը, **արական սեռի** գոյականների անորոշության ցուցիչն է՝ **-ew**:

Ավրոմանին մտնում է այն բարբառների շարքը, որտեղ պահպանվել է երկհոլովային համակարգը՝ ուղիղ և թեք. թեքումը տարբերակվում է ըստ սեռի և թվի, այսինքն կցական հոլովումը փոխվում է ըստ իգական և արական սեռերի և եզակի ու հոգնակի թվի: Ընդ որում, ըստ արական և իգական սեռերի, գոյություն ունեն հոլովման մի քանի տիպեր, որոնց միջև տարբերությունը էական չէ: Գոյականն ու թվականն ունեն միևնույն հոլովական-թվային վերջավորությունները: Թերևս, որպես տարբերություն պետք է նշել այն փաստը, որ ածականը փոխվում է ըստ թվի, հոլովման և սեռի, այն դեպքում երբ գոյականի սեռը որոշարկված է և փոփոխության չի ենթարկվում:

Թիվ	հոլով	Հոլովման տեսակները		
		1	2	3
	ուղիղ	Har«ավանակ»,pīr«ծեր», rō «օր»	Yāna «տուն», kona «հին»	Piā«տղամարդ», jiā «առանձին»
	թեք	Harī, pīrī, rōy	Yānay, konay, piāy, jiāy	
Հ. թ.	ուղիղ	Hare, pirē	Yānē, konē	Piay, jiay
	թեք	Harā, pira, yānā, konā		Piāyā, jiāyā

**Աղյուսակ 2.** Արական սեռի գոյականների ու ածականների հոլովումը

Թիվ	հոլով	Հոլովման տեսակները				
		1	2	3	4	5
Եզ. թ.	ուղիղ	Mâhara «ավանակ», pîra «պառավ»	Kârdi «դանակ»	kəṇâçakē «աղջիկ», kone «հին»	Jîə «առան ձին»	Adâ «մայր»
	թեք	Mâhare, pîre, kârdi		Kəṇâçe, kone	Jîə, adə	
Հ.թ.	ուղիղ	Mâharē, pîrē	kârdyē	kəṇâçakē , kone	Jîay, aday	
	թեք	Mâharâ, pîrâ, kârdâ, kəṇâçâ, konâ		Jîyâyâ, adâyâ		

**Աղյուսակ 3.** Իգական սեռի գոյականների ու ածականների հոլովումը

Թիվ	հոլով	Հոլովական վերջավորությունները	
		Արական սեռ	Իգական սեռ
Եզ.թ.	Ուղիղ	-ó, -'a	-'a, -'i, -e', -'ə, -â
	Թեք	-i, -y	-'e, -e', -ə'
Հ.թ.	Ուղիղ	-'e, -e', -ə'-i	
	Թեք	-â', -yâ'	

**Աղյուսակ 4.** Ավրոմանիի հոլովական վերջավորությունները

**Սծական.** Ավրոմանիում ածականին բնորոշ են թվի (եզակի և հոգնակի), սեռի (արական և իգական), հոլովի (ուղիղ և թեք) քերականագրերը, որոնք արտահայտվում են գոյականների հետ դրանց համաձայնեցման ժամանակ:

Ավրոմանիում, որպես կանոն, ածականները հաջորդում են գոյականին. գոյականներն ու ածականները կարող են գտնվել որոշյալ-որոշիչ, հատկացուցիչ-հատկացյալ հարաբերության մեջ, որոնց ներքին կապն արտահայտվում է իգաֆեթով:

Ավրոմանիում որակական ածականները տարբերակում են համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական, գերադրական:

1. *Դրական աստիճանը* չի արտահայտվում որևէ հատուկ ցուցիչով:

2. *Բաղդատական աստիճանն* արտահայտվում է [tar] (արական սեռի դեպքում) և [tara] (իգական սեռի դեպքում) մասնիկներով.

*koři žirtar*

*ավելի խելացի տղա*

*žani žirtara*

*ավելի խելացի կին*

Ավրոմանիում նախադասության մեջ բաղդատական աստիճանը, սովորաբար, կիրառվում է [ja] կամ [č] նախդիրի հետ, որը դրվում է որոշից առաջ.

*wâč ja bërâlay rahmin tara na.* Քույրը եղբորից (ավելի) բարեհամբույր է:

3. Ավրոմանիում գերադրական աստիճանը կազմվում է [tarin] մասնիկի միջոցով.

*barz tarin koř kēn.* Ո՞վ է ամենաբարձրահասակ տղան:

Ավրոմանիում առանձնանում են **անձնական, ցուցական, քննչանուր, սաստկական, անդրադարձ, ժխտական, հարցական, որոշյալ, անորոշ դերանունները**: Ավրոմանիում երրորդ դեմք եզակի թիվն անձնական դերանվան չորս ձև է տարբերակում. սա պայմանավորված է արական և իգական սեռերի առկայությամբ:

Դեմք	Եզակի թիվ		Հոգնակի թիվ	
I	<i>am(amen)</i>	<i>tu</i>	<i>ēma</i>	<i>մենք</i>
II	<i>tō</i>	<i>դու</i>	<i>šōma</i>	<i>դուք</i>
III	<i>ād, ēd</i>	<i>նա(ար.ս.)</i>	<i>ādē</i>	<i>նրանք</i>
	<i>āda, ēda</i>	<i>նա(իգ.ս.)</i>		

Ավրոմանիում առանձնանում են հետևյալ ցուցական դերանունները.  
 ina «այս»\_կիրառվում է մոտ առարկա մատնանշելու համար արական սեռի դեպքում;  
 inē «այս»\_կիրառվում է մոտ առարկա մատնանշելու համար իգական սեռի դեպքում;  
 āna «այն»\_կիրառվում է հեռու առարկա մատնանշելու համար արական սեռի դեպքում;  
 ānē «այն»\_կիրառվում է հեռու առարկա մատնանշելու համար իգական սեռի դեպքում;  
 ōna «այն»\_կիրառվում է առավել հեռու առարկա մատնանշելու համար արական սեռի դեպքում;  
 ōnē «այն»\_կիրառվում է՝ առավել հեռու առարկա մատնանշելու համար իգական սեռի դեպքում:

Ավրոմանիի կցական դերանունները հետևյալ են՝

Դեմք/Թիվ	Բաղաձայնից հետո		Չայնավորից հետո	
	եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
I	<b>-im</b>	<b>-imân</b>	<b>-m</b>	<b>-mân</b>
II	<b>-it=t</b>	<b>-itân</b>	<b>-t=t</b>	<b>-tân</b>
III	<b>-iš</b>	<b>-išân</b>	<b>-š</b>	<b>ân</b>

**Աղյուսակ 5.** Ավրոմանիի կցական դերանունները

Ավրոմանին իրանական այն եզակի բարբառներից է, որը պահպանել է -ծ (-yč, հաջորդում է միայն -e, -i, -y հնչյուններին) վերջածանցային կցականը:

**Թվական անուն.** Ավրոմանի բարբառում առանձնանում են քանակական, դասական, կոտորակային, բաշխական թվականները:

*Քանակական թվականները* թե ձևով և թե կազմությամբ նույնական են պարսկերենի թվականներին, բացառությամբ՝ yarē «երեք» թվականին: Այս թվականը հանգում է հին իր. \*θraya- նախաձևին և ավրոմանիում ցույց է տվել հյուսիսարևմտյան օրինաչափ զարգացում՝ հմմտ. պրթ. **hrē**, սակայն պրսկ և իրանական լեզուների մեծամասնությունում՝ **se**:

Ավրոմանիում *դասական թվականները* կազմվում են քանակական թվականներին **-ōm** և **-ōmīn** վերջածանցների հավելումով: Որպես կանոն, երբ բառին կցվում է **ōm** վերջածանցը, ապա այդ թվականը նախորդում է անվանը, իսկ **ōmīn** ածանցով բաղադրված թվականները հիմնականում նախորդում են անվանը:

Քանակական թվականներին զուգահեռ ավրոմանիում նաև տարածված է *դասանիշների* կիրառությունը: Դասանիշների հետ կիրառված թվականը դրվում է եզակի թվով, դասանիշն էլ նախորդում է թվականին: Ստորև բերվել են առավել լայն տարածում ունեցող դասանիշները.

<b>Դասանիշ</b>	<b>Կիրառությունը</b>
lāmeštay (մի բուռ)	lāmeštay jenje ( մի բուռ դդմի կորիզ)
bənay (ծառերի համար)	bənay hanjir (մի հատ թզենի)
ban (համրիչի հաշվման միավոր)	banay dazbēhē (մի շար համրիչ)
bâqa (ծաղկեփնջի հաշվման միավոր)	bâqewa welī (վարդի մի փունջ)
bazm (տեղական երգի հաշվման միավոր)	bazmay gorānyē (մի հատ տեղական երգ)
das (հագուստի ու տան հաշվման միավոր)	dasay yānē (մի տուն)
tika (գորգերի հաշվման միավոր)	tikay qâtya (մի գորգ)
hita (գույգ իրերի հաշվման միավոր)	hitay pālay (մեկ գույգ կոշիկ)
hōša (ողկույգ)	hōšay hâlē (մեկ ողկույգ խախող)
laq (փոքրիկ ծառերի և ճյուղերի հաշվման միավոր)	laqay sâwi (մի ճյուղ խնձոր)
pal (հացի ու թղթի հաշվման միավոր)	palay kâyaz (մեկ թերթ)
sar (կենդանիների հաշվման համար)	čəwâ sarē hēwân (չորս գլուխ կենդանի)

puta (բիդոն)	putay ganma (մեկ բիդոն ցորեն)
jâmôta (բաժակ)	jâmôtay âwi (մեկ բաժակ ջուր)
dawri (ափսե)	dawryêwa brenj (մեկ ափսե բրինձ)
gaz (երկարության չափման միավոր)	gazay jens (մեկ մետր կտոր)

### Աղյուսակ 6. Դասանիշներ

Ավրոմանիում **կապերը** կարևոր նշանակություն ունեն, քանի որ բառերի միջև շարահյուսական կապերը հենց դրանց միջոցով են արտահայտվում:

Ըստ կազմության՝ ավրոմանիում առանձնանում են պարզ և բարդ կապեր: Սովորաբար, կապերը նախորդում են խնդրին, սակայն երբեմն էլ հաջորդում են դրան: *Հետդիրներ՝*

**ana** կիրառվելով խնդրից հետո, արտահայտում է հայերենի բացառական և ներգոյական հոլովների իմաստները:

**wa / ôw** կապն արտահայտում է հայերենի բացառական հոլովի իմաստը: **ra** «մեջ», «դեպի» կապն արտահայտում է հայերենի ներգոյական, տրական հոլովների իմաստները:

Ավրոմանիում **շաղկապները** կարելի է դիտարկել ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների: Իմաստային առումով ավրոմանին տարբերակում է համադասական և ստորադասական շաղկապներ: Ըստ կազմության՝ առանձնանում են պարզ և բարդ շաղկապներ:

Ավրոմանիում **մակբայը** կարելի է դիտարկել ըստ կազմության և իմաստի: Ըստ կազմության՝ մակբայները լինում են պարզ, բարդ, ածանցավոր:

Ըստ իմաստի՝ մակբայները լինում են ժամանակի, տեղի, ձևի, չափի:

Ավրոմանիի **բային** բնորոշ են սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգերը: Բայի եղանակային ձևերը նախադասության մեջ գործածվում են որպես պարզ ստորոգյալ: Բայական մյուս ձևերը՝ դերբայները, ինչպես նաև բոլոր ինքնուրույն նյութական իմաստ արտահայտող բառերը, կարող են լինել բաղադրյալ ստորոգյալի անվանական մաս: Ավրոմանիին բնորոշ առանձնահատկություններից է քերականական սեռի տարբերակումը բայական հարացույցի երրորդ դեմք եզակի թվում: Մյուս կարևոր առանձնահատկությունը էրգատիվ կառույցն ու դրա լայն կիրառումն է: Ընդհանրապես, էրգատիվ կառույց ունեցող իրանական լեզուներում այն կազմվում է հետևյալ օրինաչափություններով. էրգատիվ կառույցի սուբյեկտն ունի հիմքի հետ համընկնող ուղղական հոլովաձև. էրգատիվ համակարգի սուբյեկտը դրվում է թեք հոլովով. բայը չունի սուբյեկտի

հետ համաձայնեցվող ֆլեկտիվ վերջավորություններ: Ավրոմանիում էրգատիվ կառույցն ունի հետևյալ ձևերը.

1. Սուբյեկտը արտահայտվում է կցական դերանվան միջոցով՝ ավելանալով օբյեկտին, իսկ բայը մնում է անփոփոխ. Asp=i=m di Ես տեսա մի ձի, To=m di Ես քեզ տեսա

2. Բայը համաձայնեցվում է հոգնակի օբյեկտի հետ. Asp-ē=m di-e Ես տեսա ձիերին

3. Կցականը կարող է ավելանալ նաև պարագային. Hizi=m di Երեկ ես նրան տեսա

Ինչպես տեսնում ենք, ավրոմանիի էրգատիվ կառույցում գերիշխում է օբյեկտի հետ սուբյեկտը նշող կցական դերանունների կիրառելու ձևը՝ սուբյեկտի թեքման բացակայության ու բայի անփոփոխության պայմաններում:

**Մահմանական եղանակը** տարբերակում է ներկա ժամանակի երկու բայաձև՝ *ներկա ապառնի* և *ներկա շարունակական*, անցյալ ժամանակի հինգ բայաձև՝ *անցյալ կատարյալ*, *անցյալ անկատար*, *անցյալ շարունակական*, *վաղակատար*, *վաղակատար անցյալ*, իսկ բուն *ապառնիի* իմաստն արտահայտվում է ներկա-ապառնիի միջոցով:

**Հրամայական եղանակը** դրսևորում է խոսողի հրամանը, հորդորը, կոչը, պահանջը, թելադրանքը՝ ուղղված խոսակցին կամ խոսակիցներին: Ավրոմանիում հրամայական եղանակը տարբերակում է միայն երկրորդ դեմքի բայաձևեր՝ կիրառված եզակի և հոգնակի թվերով: Հրամայական եղանակն ավրոմանիում ունի դրական և ժխտական խոնարհում: **Պայմանական-ստորադասական եղանակը**

գործածվում է այն ժամանակ, երբ գործողության կատարումը կապվում է ցանկության, հնարավորության, սպասումի, պայմանի հետ: Ավրոմանիում այս եղանակն ունի երկու ժամանակ, այն է՝ ներկա ենթադրական (ատրիստ) և անցյալ ենթադրական:

### ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Անփոփելով ատենախոսության մեջ առաջ քաշված խնդիրներն ու ուսումնասիրության արդյունքները կարելի է եզրակացնել, որ

1. Գուրանի լեզվի ավրոմանի կամ հավրամի բարբառը համարվում է բոլոր գուրան-քարանդի ցեղերի սակրալ լեզուն, և առհասարակ, սա իրենից ենթադրում է հաղորդակցության վերբարբառային լեզու: Գուրանին, ինչպես նաև, ավրոմանին պատկանում են իրանական լեզուների հյուսիսարևմտյան ենթաճյուղին: Պատմական լեզվաբանության տվյալները մատնանշում են, որ գուրանական բարբառների և,

առհասարակ, իրանական լեզվաճյուղի շրջանում ավրոմանին դասվում է առավել հնավանդ ու լավ պահպանված լեզուների շարքը:

2. Գուրանական ցեղերը զբաղեցնում են ներկայիս ԻԻՀ հյուսիս-արևմտյան շրջանները՝ Քերմանշահ-Ղասբե-Չիրին-Բադդադ ճանապարհից հյուսիս ընկած Քուհ-ե-Չահան-Ղալահու լեռները՝ ընդհուպ մինչև Միրվան (Դիալա) գետը: Արևմտյան գրականության մեջ այս ցեղերը հայտնի են **գուրան (գորան)** անվանումով, չնայած վերջինս դրանց ճյուղերից մեկի, իհարկե, ամենամեծի՝ գուրան ցեղամիավորման, անվանումն է լոկ: Գուրանները բաժանվում են չորս խմբի՝ գուրանների ցեղային միավորումը, հավրամանների (ավրոմանների) մեծ ցեղը, բաջալանի ցեղախումբը, քանդուլացիները:

3. Ավրոմանիի ամբողջ տարածքը կարելի է բաժանել երեք մասի՝ Քերմանշահ նահանգը՝ Փավա և Նավսուդա կենտրոններով՝ հյուսիս-արևմուտքում, Ավրոման-ի-թախթը՝ Քուրդիստան նահանգի հարևանությամբ և Մարիվանի շրջանում, Ավրոմանը՝ Իրաքի սահմանի մերձակայքում: Վերոհիշյալ երեք շրջանն աշխարհագրական առումով սահմանամերձ են, և հետևաբար, տեղագրության, լեզվի ու տարազի, կրոնի և այլ հարցերի շուրջ բազմաթիվ ընդհանրություններ ունեն:

Ավրոմանիի տարածման հիմնական հատվածը համարվում է Ավրոման-ի-լահունը, որը տեղակայված է Քերմանշահ նահանգում, և բաժանվում է երկու մասի՝ հյուսիսային՝ Նավսուդա կենտրոնով ու հարավային՝ Փավա կենտրոնով:

4. Ավրոմանիին նվիրված աշխատանքները խիստ սակավաթիվ են՝ հիմնականում գրված 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի աղքատիկ լեզվական նյութերն արտացոլող ընդհանուր ակնարկների տեսքով, որոնցում, բնականաբար, հաշվի չեն առնված արդի լեզվաբանության նորագույն ձեռքբերումներն ու մեթոդաբանությունը:

5. Գոյություն ունի ավրոմանիով վկայված հարուստ գրականություն, որը կարելի է բաժանել երկու մասի՝ կրոնական տեքստեր և բանաստեղծություններ: 14-րդ դ. վերջից ավրոմանին համարվել է *սհլ-է հակղ* ուսմունքի սակրալ լեզուն՝ 20-րդ դարասկզբից ստանալով գրային կարգավիճակ:

6. Ավրոմանիի հնչյունական համակարգում դիտարկվում են 9 ձայնավոր՝ *â, a, ð, o, u, ē, e, i, ø*; 28 բաղաձայն՝ *b, p, m, w, v, f, d, t, z, s, ž, r, ř, n, l, ł, j, č, š, y, g, k, q, γ, x, ’, ħ, h* հնչյուն; 6 երկհնչյուն՝ *aw, âw, ay, ây, iw, ew* և երեք հնչատարբերակ՝ *đ, ŋ, ñ*:

7. Պարսկերենը լինելով ԻԻՀ պետական լեզուն իր ազդեցությունն է ունեցել ավրոմանիի վրա, հատկապես հնչյունաբանության ու բառապաշարի ոլորտներում: Դրանք ունեն երկրորդական բնույթ, չեն փոփոխում



բարբառի բառային հիմնական կազմը, հնչյունական համակարգն ու ձևաբանական կաղապարները:

8. Ավրոմանիի բաղաձայնական համակարգը պատմական զարգացման առումով ցույց է տալիս հյուսիսարևմտյան իրանական լեզուներին ու բարբառներին հատուկ առնաձևահատկություններ: Այս բարբառը քրդերենի բարբառների հետ համետական համատեքստում կարելի է բնորոշել առավել անաղարտ ու գրեթե զերծ հարավարևմտյան կամ պարսկական բարբառներին բնորոշ հատկություններից:

9. Ավրոմանիի հյուսիսարևմտյան կամ մարական հնչյունական օրինաչափություններից նշենք՝ հ. իր. \*dw- > ավր. b- (Bara «դուռ»); հ. իր. \*w- > ավր. w- (wətk «երիկամ», Wā «քամի», Waz «ճարպ», Warg «գայլ», Wir «հիշողություն»), հ. իր. \*y- > ավր. y- (yawa «գարի», Yahar «լարո, սիրտ, հոգի»); հ. իր. \*tsv- (ավ. sp-, հ. պրս. s-) > ավր. šp-/sp- (Hašpšē «ոջիլ», asp «ձի»); հ. իր. \*θr (ավ. θr, հ. պրս. ζ, պրթ. hr, մ. պրս. s) > ավր. r/ y (Āwar «հղի», Per(d)a «կամուրջ», Ayr «կրակ», Yarē «երեք», pəyā «տղա»); հ. իր. \*fr- (պրթ. hr-, մ. պրս. fr-) > ավր. hr-/r- (rōta «որդի»); հ. իր. \*x- > ավր. h- (Har «ավանակ», Hāna «աղբյուր, ակունք»); հ. իր. \*j- < ավր. ž- (Mež «փռոշի, ամպ, մեզ», Žan «կիսն», Žahr «թույն»), հ.-ե. ġ(h) > հ. իր. \*z (ավ. z, հ. պրս. d) > ավր. z (Zamā «փեսա, նորապսակ», Zānay «իմանալ» < \*zan- և այլն):

10. Ավրոմանիում գոյականը տարբերակում է թվի, սեռի, որոշյալ և անորոշ առման, ուղիղ և թեք հոլովի քերականական կարգերը: Քննարկվող բարբառում բառափոփոխման թեքական կարգերը նշված են ոչ միայն գոյականներում, այլ նաև՝ ածականներում:

11. Ավրոմանիում հոգնակի թիվը կազմվում է [ē] հոգնակիակերտի հավելումով: Գոյականին հատուկ է սեռի քերակարգը՝ արական և իգական: Իգական սեռի հիմնական ցուցիչը [a] –ն է: Ավրոմանին տարբերակում է որոշիչ և որոշյալ առման կազմության առանձին ցուցիչներ: Որոշյալ առման ցուցիչները հետևյալն են՝ [ka], [kē], իսկ անորոշ առմանը՝ [ay], [ēwa], [ēw]::

12. Ավրոմանիում պահպանվել է երկհոլովային համակարգը՝ ուղիղ և թեք. թեքումը տարբերակվում է ըստ սեռի և թվի, այսինքն կցական հոլովումը փոխվում է ըստ իգական և արական սեռերի և եզակի ու հոգնակի թվի: Ընդ որում, ըստ արական և իգական սեռերի, գոյություն ունեն հոլովման մի քանի տիպեր, որոնց միջև տարբերությունը էական չէ: Գոյականն ու թվականն ունեն միևնույն հոլովական-թվային վերջավորությունները, իսկ ածականը փոխվում է ըստ թվի, հոլովման և սեռի՝ համաձայնեցվելով գոյականի հետ:

13. Ավրոմանիում ածականին բնորոշ է թվի (եզակի և հոգնակի), սեռի (արական և իգական), հոլովի (ուղիղ և թեք) քերակարգերը, որոնք արտահայտվում են գոյականների հետ դրանց համաձայնեցման

Ժամանակ: Բարբառում, որպես կանոն, ածականները հաջորդում են գոյականին. գոյականներն ու ածականները կարող են գտնվել որոշյալ-որոշիչ, հատկացուցիչ-հատկացյալ հարաբերության մեջ, որոնց ներքին կապն արտահայտվում է իզաֆեթով: Որակական ածականները տարբերակում են համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական, գերադրական:

14. Ավրոմանիում առանձնանում են անձնական, ցուցական, ընդհանուր, սաստկական, անդրադարձ, ժխտական, հարցական, որոշյալ, անորոշ դերանունները: Անձնական դերանունը եզակի թվում չորս ձև է տարբերակում, ինչը պայմանավորված է արական և իգական սեռերի առկայությամբ: Ցուցական դերանունները դրսևորվում են առանձին ձևերում՝ ըստ սեռի և մոտ կամ հեռու առարկա ցույց տալու հատկության: Կցական դերանունները նույնական են պարսկերենի էնկլիտիկներին, սակայն ավրոմանին տարբերակում է նաև չ վերջածանցային կցականը: Ավրոմանի բարբառում առանձնանում են քանակական, դասական, կոտորակային, բաշխական թվականները: Քանակական թվականները թե՛ ձևով, թե՛ կազմությամբ նույնական են պարսկերենի թվականներին, բացառությամբ՝ *yarē* «երեք» թվականին: Այս թվականը հանգում է հին իր. \**θraya-* նախաձևին և ավրոմանիում ցույց է տվել հյուսիսարևմտյան օրինաչափ զարգացում՝ հմմտ.՝ պրթ. **hrē**: Դասական թվականները կազմվում են քանակական թվականներին **-ōm** և **-ōmīn** վերջածանցների հավելումով:

15. Ավրոմանիում տարբերակվում են պարզ և բարդ կապեր, որոնց միջոցով ապահովվում է նախադասության անդամների շարահյուսական կապը: Ընդ որում, առանձնացվում են երեք ետդիր՝ **ana**, **wa** / **ōw**, **ra**, իսկ մնացալը՝ նախդիրներ են:

16. Ավրոմանիում շաղկապները կարելի է դիտարկել ըստ կազմության և իմաստային առանձնահատկությունների: Իմաստային առումով ավրոմանին տարբերակում է համադասական և ստորադասական շաղկապներ: Ըստ կազմության՝ առանձնանում են պարզ և բարդ շաղկապներ:

17. Ավրոմանիի բային բնորոշ են սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգերը: Բայի եղանակային ձևերը նախադասության մեջ գործածվում են որպես պարզ ստորոգյալ: Բայական մյուս ձևերը՝ դերբայները, ինչպես նաև բոլոր ինքնուրույն նյութական իմաստ արտահայտող բառերը, կարող են լինել բաղդադրյալ ստորոգյալի անվանական մաս: Ավրոմանիին բնորոշ առանձնահատկություններից է քերականական սեռի տարբերակումը բայական հարացույցի երրորդ դեմք եզակի թվում: Մյուս կարևոր առանձնահատկությունը երգատիվ կառույցն ու դրա լայն կիրարկումն է:

18. Անցողական բայերի կարևոր առանձնահատկությունը էրգատիվիզմն է, որը հատուկ է այս բայերին անցյալ ժամանակաձևերում: Ավրոմանիում էրգատիվը կառուցվում է հիմնականում կցական դերանուններով՝ որպես օբյեկտի դիմային ցուցիչներ սուբյեկտի թեքման բացակայության դեպքում:

19. Բայերի խոնարհման ժամանակ ավրոմանիում անցողական և անանցողական բայերը տարբերակում են դիմային վերջավորությունների որոշակի խումբ: Ի լրումն սրա, ավրոմանիում բայերն որոշ ժամանակաձևերով խոնարհելու դեպքում (մասնավորապես, վաղակատար, անցյալ վաղակատար) III-րդ դեմքի եզակի թվում տարբերակում է իգական և արական սեռի կարգը: Ավրոմանիում առանձնանում է հինգ խումբ դիմային վերջավորություններ՝ ներկա ժամանակաձևերի, հրամայական եղանակի, անցյալ անկատար, անցյալ կատարյալ և անցյալ ենթադրական ժամանակների կազմության ժամանակ՝ անկախ դրանց անցողական կամ անանցողական լինելու հանգամանքից: Անցողական բայերի անցյալ ենթադրական ժամանակաձևի կազմության ժամանակ կցական դերանունները կիրառվում են որպես դիմային վերջավորություններ: Ավրոմանիի բայական ձևերի կազմությանը մասնակցում են **ma**, **mə**, **m**, **b**, **bə**, **be**, **p**, **pə** դրական և **na**, **nə**, **ná**, **ma** ժխտական-արգելական նախամասնիկները:

#### ՀԱՎԵԼՎԱԾ

Ատենախոսությանը կից որպես հավելված ներկայացվում է ավրոմանի-հայերեն ծավալուն բառացանկ:

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Զուֆադարի, Ա., «Ավրոմանի լեզվական տիրույթը», *Orientalia*, հ. X, ԻԿԿ, Երևան 2010, էջ 49-54:
2. Զուֆադարի, Ա., «Ավրոմանիի հնչյունական համակարգի մասին», *Orientalia*, հ. XI, ԻԿԿ, Երևան 2010, էջ 42-49:
3. Զուֆադարի, Ա., «Ավրոմանիում բայի ձևաբանական որոշ առանձնահատկությունների շուրջ», *Իրան-նամէ*, հ. 42-43, ԻԿԿ, Երևան, 2010-2011, էջ 53-57:
4. Zolfaqari, A., “The Avromani-speaking Area in Iran”, *Iran and Caucasus* 14 /2(2010), Brill-Leiden, pp. 323-330:

**Ардешир Золфагари**  
**Диалект Авромана**

*Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук*

*по специальности*

**10.02.06 «ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ»**

*Защита состоится 16 апреля 2012г. в 14:00 часов, на заседании*

*специализированного совета 019, действующего в Институте языка имени*

*Гр. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).*

**РЕЗЮМЕ**

Представляемая диссертация посвящена синхронному и диахронному изучению диалекта Авромана. Она основана на полевом материале, собранном автором в местности Паве иранской провинции Керманшах. Диалекты до сих пор не были объектом всестороннего научного исследования и анализа. Данную работу можно считать первым исследованием в области Гуранской диалектологии, в частности Авроманского диалекта.

Во «**Введении**» определяется объект исследования, приводятся данные о географическом расположении, численности и образе жизни авроманоязычного населения этого района.

В кратком очерке рассматривается проблема места авромани в системе иранских языков и диалектов. Диалект Авромана зачисляется в состав западных иранских языков судя по историко-этимологическим и историко-грамматическим данным. В рамках северо-западной группы иранских языков авромани наиболее близок с гуранскими и курдскими диалектами. Между тем авромани обнаруживает ряд сходных черт с персидским, которые имеют вторичный характер.

В предисловии также обосновывается исследование диалекта и дается подробный обзор работ, посвященных изучению и его языкового состава, включая новейшие публикации по данной тематике.

Первая глава – «**Фонетика**» – посвящена анализу состава вокализма и консонантизма указанного диалекта в синхронном и диахронном плане. Вокализм диалекта Авромани представлен этими гласными **â, a, õ, o, u, ê, e, i, ə**, этими тифтонгами **aw, âw, ay, ây, iw, ew**. Все гласные авроманского диалекта по признаку противопоставления долгота-краткость можно группировать как: краткие /a e o u i ə / и долгие / **â õ ê** /. Авроманский консонантизм выглядит следующим образом: **b, p, m, w, v**,

*f, d, t, z, s, ž, r, ř, n, l, ł, j, č, š, y, g, k, q, γ, x, ', ħ, h*. Таким образом, в авроманском диалекте отмечается 28 согласных.

В этой главе все фонемы рассматриваются в плане исторического развития. Исторические соответствия согласных, которые обнаружены в авромани, следующие: \*dw- > b- (Bara «дверь» < д.ир. \*dwar-); \*w- > w- (Wâ «ветер», Waz «масло», Warg «волк», Wir «воспоминания»), \*y- > y- (yawa «ячмень», Yahar «душа»); д.ир. \*tsv- (ав. sp-, д. перс. s-) > šp-/sp- (Hašpšē «вошь», asp «лошадь»); д.ир. \*θr (ав. θr, д.перс. z, парф. hr, с. перс. s) > r/ y (Âwar «беременный», Per(d)a «мост», Ayr «огонь», Yarē «три», рəуâ «мальчик»); д.ир. \*fr- (парф. hr-, с.перс. fr-) > hr-/r- (rōta «сын»); д.ир. \*x- > h- (Har «осель», Hāna «источник»); д.ир. \*j- < ž- (Mež «пыг», Žan «женщина», Žahr «яд»), ĝ(h) > д.ир. \*z (ав. z, д.перс. d) > z (Zamâ «зять», Zānu «знать» < \*zap-) и т.д.

В этой главе, в частности, рассматривается и лексический состав авромани. Этот диалект отличается богатым лексическим составом, в котором незначительное место занимают курдский и гуранский языковые элементы. В этой главе дается этимология многих лексических единиц.

В сравнительном контексте с персидским выявляются вторичные фонетические различия двух языков. Подробное изучение и анализ материала выявляют факт персидских заимствований в авромани.

Во второй главе – **«Морфология»** – синхронно-описательным и, частично, диахроническим методами рассматривается морфологический строй авромани. Дается синхронно-описательное представление всего строя языка.

Подобно другим языкам северо-западной группы, авромани сохранил именное склонение и родовые различия.

В глаголе различаются две основы-основа настоящего времени и основа прошедшего времени. Они в общем идентичны персидским, не считая фонетических изменений, свойственных северо-западным диалектам. Основа настоящего времени восходит к древнеиранской презентной основе, а основа прошедшего времени восходит к древнеиранскому причастию прошедшего времени на \*ta-: Различаются три наклонения: изъявительное, сослагательное, повелительное и два залога: активный, пассивный. В изъявительном наклонении различаются пять видо-временных форм: настояще-будущее время, простое прошедшее время, прошедшее длительное или многократное, преждепрошедшее время и перфект. Сослагательное наклонение представлено двумя видо-временными формами - настояще-будущим и прошедшим временами. Повелительное наклонение имеет только форму 2-ого лица ед. числа.

Флексивное глагольное спряжение ограничено. В прошедшем времени оно обусловлено категорией переходности-непереходности. У переходных глаголов в прошедшем времени лицо и число субъекта действия выражено не личными окончаниями, а отделяемыми местоименными показателями. Местоименные энклитики еще употребляются в функциях: а) определения, б) прямого дополнения, в) косвенного дополнения. Авроманский глагол имеет пять видов личных окончаний, а глагольные суффиксы следующие: **ma, mə, m, b, bə, be, p, pə** и отрицательные **na, nə, nâ, ma**.

В авромани широко представлены система предлогов и система вспомогательных глаголов. В диалекте представлен три послелога: **ana, wa / ðw, ra**, а остальные-предлоги.

Основные типы местоимении следующие: личные, энклитики, возвратные, указательные, вопросительные, неопределенные. Зафиксированы следующие группы наречий: 1) наречия места, 2) наречия времени, 3) наречия образа, 4) наречия причины и цели, 5) наречия меры и степени.

Анализ каждой части речи иллюстрируется примерами из разговорной речи.

В «**Заключении**» диссертации приводятся выводы и подводятся основные итоги работы.

«**Приложение**» включает авромани-армянский глоссарие.

## **Ardeshir Zolfaqari** **The dialect of Avroman**

*A thesis for PhD degree in Philology, speciality 10.02.06, The Ancient and Modern Languages of Asia (Iranian languages). The defence will take place on April 16, 2012 at 14:00 at the address 0015 Yerevan, Grigor Lusavorich St. 15 at the special session of the Academic Council (N 019) of the Hrachia Acharian Institute of Linguistics.*

### **SUMMARY**

The present dissertation is dedicated to the synchronic and diachronic study of the Awromani dialect. It is mainly based on the fieldwork materials collected by the author in the locality called Pava (Kermanshah province, Iran). So far the dialect of Awroman has not been an object of comprehensive research and analysis. Thus, the current work can be considered as the first attempt to examine the dialectology of Gorani dialects and Awromani in particular.

In the “Foreword” the author defines the object of the study and presents data on the location of Pava, its population, and their life mode.

A short outline shows the location of Awromani in the system of Iranian languages and dialects. Based on its historical-etymological and historical-grammatical characteristics, the dialect of Awroman is ascribed to the north-western group of Iranian dialects. Within this group, Awromani has a close affinity with the Gorani and Kurdish dialects. Awromani displays a number of similarities with Gorani and has many loanwords from Persian language. In the “Foreword” the author also illustrates the purpose of the research on this dialect and gives a thorough overview of the works dedicated to the study of Awromans and their language structure, including the latest publications on the subject as well as shows the lack of scholarly studies on the field.

The first chapter called “**Phonetics**”, focuses on the synchronic and diachronic study of the vocalism and consonantism of Awromani. The vowel system is represented by the following vocals: *â, a, ô, o, u, ê, e, i, ə*; which can be divided into two groups according to their duration: short vowels /a e o u i ə / and long vowels / *â ô ê* /. The consonantism of Awromai includes the following 28 consonants: *b, p, m, w, v, f, d, t, z, s, ž, r, ř, n, l, l, j, č, š, y, g, k, q, γ, x, ’, ħ, h*; and the tuftings are *aw, âw, ay, ây, iw, ew*:

In this chapter all phonemes are examined in accordance with their historical development. Here are some historical correspondences discovered in Awromani: \*dw- > b- (Bara «door» < OIr. \*dwar-); \*w- > w- (Wâ «wind», Waz «oil», Warg «wolf», Wir «remembrance»), \*y- > y- (yawa «barley», Yahar «soul»); OIr. \*tsv- (av. sp-, Ol. P. s-) > šp-/sp- (Hašpšē «louse», asp «horse»); OIr. \*θr (av. θr, Ol. P. ç, Parth. hr, M.P. s) > r/ y (Âwar «pregnant», Per(d)a «bridge», Ayr «fire», Yarē «three», payâ «boy»); OIr. \*fr- (Parth. hr-, M.P. fr-) > hr-/r- (rōla «son»); OIr. \*x- > h- (Har «donkey», Hâna «source»); OIr. \*j- < ž- (Mež «dust», Žan «wife», Žâhr «poison»), ĝ(h) > OIr. \*z (av. z, Ol. pers.. d) > z (Zamâ «husband», Zânay «to know» < \*zan-) etc.

This chapter, also, shed light on the lexical composition of Awromani. This dialect stands out because of its rich lexical content, as there is a small percent of Kurdish and Guranic lexical elements in it. The etymology of a number of lexemes are introduced as well.

Comparing this dialect with Persian, the author reveals secondary phonetic differences between the two languages. The detailed scrutiny and the analysis of the materials illustrates that Awromani has taken secondary influences from Persian.

The second chapter, “**Morphology**”, examines the morphological structure of Awromani, using synchronic-descriptive and, in some cases, diachronic methods. It provides a comprehensive description of the structure of the language.

Likewise many other north-western Iranian dialects, Awromani has noun declension and gender inflexions. The verb has two stems – the present stem and past stem. Beyond the phonetic changes peculiar to Awromani, these stems are, generally, identical to their Persian counterparts. The present stem is derived from Old Iranian, and the past stem originates from the Old Iranian past participle \*ta-

Awroamani has three grammatical moods: indicative, subjunctive, imperative, and two voices: active and passive. The indicative mood differentiates 5 tenses: present-future, simple past, past continuous (or frequentative), past perfect and perfect. Inflexional verb conjugation is limited. In the past tense the transitivity and intransitivity of the verbs is distinguished. The person and number of subject of transitive verbs are not expressed by personal endings, but by separate pronominal indicatives. Enclitic pronouns also perform the following grammatical functions: a) definitive, b) direct object, c) indirect object.

Awromani has a large system of prepositions and auxiliary verbs.

The main types of pronouns are the following: personal, enclitic, reflexive, demonstrative, and interrogative. The following groups of adverbs are testified: 1) adverbs of place, 2) adverbs of time, 3) adverbs of manner, 4) adverbs of cause and effect, 5) adverbs of measure.

In the “**Summary**” of the dissertation the author presents the main outcomes and conclusions of the work.

The “**Appendix**” includes a Awroamani-Armenian glossary.